ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2021 թվականի թիվ 247-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 54-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԿԵՏԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում արտակարգ իրավիճակների ուսումնասիրման, հետևանքների նվազեցմանն ու վերացմանն օպերատիվ արձագանքելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» N 54-Ա կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում արտակարգ իրավիճակների ուսումնասիրման, հետևանքների նվազեցմանն ու վերացմանն օպերատիվ արձագանքելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ - Նարեկ Ղուշչյան
Հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ պետ
Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Համապատասխան համայնքի ղեկավար

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

19.08.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ